



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

28 դեկտեմբերի 2018 թվականի N 218-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատարի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի N 28515-18 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների նկատմամբ կիրառել *«միանվագ դրամական պարզևարում»* խրախուսանքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի դեկտեմբերի 28
ք. Հրազդան



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 218-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ

Հ/հ	Դպրոցը (միջնակարգ, հիմնական)	Տնօրենի ազգանունը, անունը	Տնօրենի աշխատավարձի նկատմամբ «միանվագ դրամական պարգևատրման» չափը տոկոսային արտահայտությամբ (%)
1	Պտղնիի միջնակարգ դպրոց	Արզումանյան Հասմիկ	30
2	Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան N 2 միջնակարգ դպրոց	Ղազարյան Պայծառ	50